

Հետազոտական ավարտական աշխատանք
Վերապատրաստող կազմակերպություն
<<Կապանի թիվ 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱՆՔԻ ԴԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Վերապատրաստման դասընթացի
ՆԶՊ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿԻՑ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԶԻՆՂԵԿ ՊԱՀԵՍՏԻ ՄԱՅՈՐ
ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2022թ.

Ց Ա Ն Կ

1. Ներածություն էջ 3
2. Տեղանքի հիմնական տարատեսակները և դրանց մարտավարական հատկանիշները էջ
3. Տեղանքը և նրա նշանակությունը մարտի ժամանակ էջ 5
4. Ռելիեֆի պատկերումը էջ 6
5. Տեղանքի տակտիկական հատկությունները էջ 9
6. Տեղանքի հիմնական տարատեսակները և նրա տակտիկական հատկություններ էջ 14
7. Տեղագրական քարտեզների վրա առանձին տեղամասերի նկարագրությունը էջ 18
8. Լեռնային պայմանների առանձնահատկությունները և նրանց ազդեցությունը հատուկ առաջադրանքներ կատարող ստորաբաժանումների գործողությունների վրա էջ 20
9. Տեղագրայան քարտեզ էջ 27
10. Եզրակացություն էջ 32
11. Գրականություն էջ 33


Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ռազմական տեղագրությունը գիտելիքներ է տալիս տեղանքի, նրանում կողմնորոշվելու եղանակների, տարբեր առաջադրանքներ կատարելու ժամանակ տեղագրական քարտեզները հստորեն օգտագործելու, ինչպես նաև տեղանքում քարտեզով աշխատելու ձևերի և գծագրական փաստաթղթեր կազմելու մասին: Ռազմական տեղագրությունն ուսուցանում է տեղանքի առանձնահատկությունները նրա վրա կողմնորոշվելը, մարտական գործողությունների համար տեղանքի գնահատման և այլ հարցեր, ինչպես նաև սովորեցնում է տեղագրական քարտեզների և աերոլուսանկարների օգտագործման ձևերը մարտական տարբեր առաջադրանքներ կատարելու ժամանակ:

Ռազմական տեղագրությունում ձեռք բերված գիտելիքները և ունակությունները հնարավորություն կտան մարտը հաջողությամբ վարել, ճիշտ գնահատել իրադրությունը, ընդունել առավել նպատակահարմար որոշում, լավ կազմակերպել դիտարկումը, կրակի համակարգի և ստորաբաժանումների կառավարումը մարտում, լիարժեք օգտագործել տեղանքի մարտավարական և պաշտպանական հատկանիշները:

Ռազմական տեղագրության ուսուցումը նպաստում է անձնակազմի մեջ այնպիսի կարևոր հատկությունների զարգացմանը, ինչպիսիք են դիտողականությունը, ճշգրտությունը, դիտարկումների արդյունքները վերլուծելու ունակությունը և մարտական խնդիրների լուծման վրա տեղանքի ազդեցության գնահատումը:

ՏԵՂԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ



Ըստ ուղիների բնույթի տեղանքը լինում է հարթավայրային, բլրային և լեռնային: Կախված մարտավարական մտահղացումից՝ մարտական գործողությունների համար հարթավայրային տեղանքը համարվում է և բարենպաստ, և անբարենպաստ: Բլրային տեղանքը նպաստավոր է ինչպես հարձակման, այնպես էլ պաշտպանության համար:

Լեռնային տեղանքը համարվում է փակ և մասնատված. Սա անչափ դժվարացնում է միասնական ճակատի ստեղծումը, մարտական տեխնիկայի խուսանավումը, տեղանքում կողմնորոշումը, թշնամու կրակետերի հայտնաբերումը և այլն:

ԸՍՏ բուսածածկույթի տեղանքը լինում է անտառային, ճահճային և անապատային: Վերջին երկուսը մեր հանրապետությունում գրեթե բացակայում են: Անտառային տարածքը, ելնելով նրա չափսերից, ծառերի խտությունից, հաստությունից, բարձրությունից և նույնիսկ ծառատեսակներից, հեշտացնում է պաշտպանությունը և խիստ դժվարացնում հարձակվողական գործողությունները:

Տեղանքի ուսումնասիրման համար կիրառվում են *հետևյալ մեթոդները*.

- *Տեղագնում* կատարվում է անմիջապես դիտարկումով, տալիս է ճշգրիտ և լիարժեք տեղեկություններ: Միակ թերությունը հնարավոր չէ ուսումնասիրել հեռավոր տարածքները:

- *Տեղագրական քարտեզի ընթերցում*՝ տալիս է ճշգրիտ և սպառնիչ տեղեկություններ ցանկացած հեռավորության վրա գտնվող օբյեկտի մասին:

ՏԵՂԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Տեղանքի տեղագրական տարրերը: Տեղանք ասելով հասկացվում է երկրի մակերևույթի որոշակի տեղամասը, որի վրա նախատեսվում է կատարել տրված առաջադրանքը:

Տեղանքի հիմնական տեղագրական տարրերից են *ռելիեֆը* և *տեղանքի առարկաները*: Երկրի մակերևույթը կազմող անհարթությունները կոչվում են տեղանքի *ռելիեֆ*, իսկ նրա վրա գտնվող բնական և արհեստական առարկաները *տեղանքի առարկաները*: Ըստ *ռելիեֆի* բնույթի տեղանքը լինում է հարթավայրային, բլրոտ ու լեռնային: Տարբեր խոչնդոտներով /ձորակներով, հովիտներով, խրամուղիներով և այլն/ կտրտվածության աստիճանով այն բաժանվում է խիստ կտրտված, միջին կտրտված և թույլ կտրտված տեղանքների: Քողարկման և դիտարկման պայմանների տեսակետից տեղանքը կարող է լինել փակ, կիսափակ և բաց:

Տեղանքի տակտիկական հատկությունները: Ռելիեֆի և տեղանքի առարկաների բնույթը որոշում են տեղանքի տակտիկական հատկությունները, այսինքն նրա ազդեցությունը մարտի կազմակերպման և վարման, մարտական տեխնիկայի կիրառման, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման, քողարկման և անցանելիության վրա: Մարտական գործողությունների վրա հատկապես մեծ

ազդեցություն է թողնում ռելիեֆը: Հովիտները /խանդակները, ձորակները/ մարդկանց և տեխնիկան պատսպարում են թշնամու դիտարկումից ու կրակից, միննույն ժամանակ դրանք բնականաբար հանդիսանում են բնական արգելքներ և խոչընդոտներ:

Տեղանքի ուսումնասիրման եղանակները: Ջոկի հրամանտարի կողմից ջոկի մարտական գործողությունների շրջանում տեղանքի անմիջական զննումը և հակառակորդի տեղաբաշխման շրջանում տեղանքի դիտարկումը տեղանքի ուսումնասիրման հիմնական եղանակներն են:

Տեղանքի անմիջական զննումը թույլ է տալիս գնահատել նրա տակտիկական և պաշտպանական հատկությունները:

Հակառակորդի տեղաբաշխման շրջանում տեղանքի դիտարկման միջոցով կարելի է պարզել բնական արգելքների առկայությունը և բնույթը, կարևոր բարձունքները, դեպի հակառակորդը և դեպի մեզ ուղղված հարմար մատույցների առկայությունը, հակառակորդի զբաղեցրած տեղանքում կատարված փոփոխությունները:

Տեղանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս հրամանատարին որոշելու հակառակորդի կրակային կետերի տեղաբաշխման, նրա դիտակետերի տեղերը, մեր պաշտպանությանը մոտենալու հնարավոր ուղղությունները, ծածուկ տեղաշարժերի հնարավորությունները և այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են որոշում ընդունելու համար:

Տեղանքի ուսումնասիրման համար կիրառվում են հետևյալ մեթոդները.

- Տեղանքի հետախուզություն: Կատարվում է անմիջական դիտարկումով, տալիս է ճշգրիտ և լիարժեք տեղեկատվություն: Միակ թերությունն այն է, որ հնարավոր չէ ուսումնասիրել հեռավոր տարածքները:

- Տեղագրական քարտեզի ուսումնասիրում: Տալիս է ճշգրիտ և սպառիչ տեղեկություններ՝ ցանկացած հեռավորության վրա գտնվող օբյեկտների մասին:


ՌԵԼԻԵՖԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ

Երկրի մակերևույթը կազմող անհարթությունները կոչվում են տեղանքի ռելիեֆ: Ռելիեֆը աշխարհագրական տարրերից ամենակարևորն է: Նա իրենից ներկայացնում է երկրի ֆիզիկական մակերևույթի՝ լեռների, հարթավայրերի, իջվածքների, ձորերի, հովիտների և այլ տարրերի միասնությունը:

Ռելիեֆը և ջրային ցանցը քարտեզի աշխարհագրական հիմքն են: Հորիզոնականները ստացվում են հայտնի բարձրության նիշերի միջադրության միջոցով:

Հորիզոնականներ են կոչվում ցամաքի վրա գտնվող միևնույն բարձրության կետերը միացնող գծերը:


Ռելիեֆի պատկերման գործում մեծ նշանակություն ունի հորիզոնականների բարձրության կտրվածքի մեծությունը, որը կախված է լինում քարտեզի մասշտաբից և պատկերվող տարածքի ռելիեֆի բնույթից: **Բարձրության կտրվածք կոչվում է երկու հարևան հորիզոնականների բարձրությունների տարբերությունը:** Քարտեզների վրա ընդունված է հորիզոնականները պատկերել շագանակագույնով: Առանձին տարածքներ պատկերելիս, երբեմն ռելիեֆի շատ բնորոշ հատվածների պատկերումը չի համապատասխանում կտրվածքի բարձրությանը: Այդպիսի դեպքերում անցկացվում են **կիսահորիզոնականներ** (բարձրության կտրվածքի կեսի չափ), քառորդ հորիզոնականներ (բարձրության կտրվածքի մեկ քառորդին հավասար): Հիմնական հորիզոնականները պատկերվում են անընդհատ գծերով, իսկ մնացածները՝ ընդհատված գծիկներով: Փակ հորիզոնականներով պատկերվող ռելիեֆի դրական և բացասական ձևերը ստացվում են իրար շատ նման, նրանք միմյանցից տարբերելու, ինչպես և լանջերի թեքության ուղղությունը ցույց տալու համար օգտագործվում են **բերզտրիխները** : 1 (ա) գծագրում ցույց է տրված բլուր, որի բերզտրիխները ուղղված են դեպի դուրս, իսկ 1(բ) գծագրում գոգավորության բերզտրիխները ուղղված են դեպի ներս:



Ռելիեֆը ավելի ընթեռնելի և պարզ դարձնելու նպատակով ամեն մի 4-րդ կամ 5-րդ հորիզոնականը գծվում է հաստ գծով: Ռելիեֆի առանձին հատվածների և կետերի բարձրությունները գտնելու համար ընդունված է որոշ հորիզոնականների վրա գրել հորիզոնական բարձրություն: Այդ կատարվում է այն հաշվով, որ թվերի գլխամասը միշտ


ուղղված լինի դեպի ռելիեֆի բարձր կողմը: Դրական ռելիեֆի դեպքում նպատակահարմար է թվերը գրել ռելիեֆի բնորոշ տարրի հարավային, իսկ բացասականների դեպքում՝ հյուսիսային լանջում(1ա և1բ): Ռելիեֆի պատկերման համար մեծ կիրառում ունի բարձրության նիշերով ծովերի և խոշոր գետերի հատակի ռելիեֆի ցույց տալը:

Բարձրության նիշերով ռելիեֆը պատկերելիս առանձին կետերի բարձրությունները ստացվում են մեծ ճշգրտությամբ,սակայն ռելիեֆի ձևերը չեն պատկերվում գծ.2:



Տեղագրական քարտեզների վրա բարձրության նիշերով ցույց են տրվում եռանկյունաչափական և դաշտաչափական կետերի բարձրությունները: Տեղագրական քարտեզների հորիզոնականները հնարավորություն են տալիս ռելիեֆի նկատմամբ բազմաթիվ չափումներ կատարել և հորիզոնականների հետ կապված մի շարք խնդիրներ լուծել:

1.Ռելիեֆի ցանկացած կետի բարձրությունը գտնելը:Եթե կետը գտնվում է անմիջապես հորիզոնականի վրա, ապա նրա բարձրությունը հավասար է հորիզոնականի բարձրությանը, իսկ եթե կետը գտնվում է երկու հորիզոնների միջև ,այդ դեպքում նրա բարձրությունը կարելի է ստանալ քարտեզի վրա,որոշ չափումներ և հաշվումներ կատարելուց հետո: Ենթադրենք տեղագրական քարտեզի վրա տրված է M կետը հորիզոնների բարձրության կտրվածքը հավասար է 10 մետրի, իսկ կետին մոտիկ նախորդ (ցածր)հորիզոնական բարձրությունը՝ 120 մետրի, պահանջվում է գտնել այդ կետի բացարձակ բարձրությունը (գծ.3)



Նախ պետք է չափենք M կետով անցնող երկու հարևան հորիզոնականները միացնող ամենակարճ AB գիծը, ապա գծի այն հատվածը, որն ընկած է տվյալ կետի և նախորդ հորիզոնականի միջև՝ MB : Ստացված և տված տվյալների միջոցով համեմատություն կազմելով, կստանաք M կետի հարաբերական բարձրությունը. այն գումարելով նախորդ հորիզոնական բարձրությունը կստանանք բացարձակ բարձրությունը:

Մեր տվյալները ընդունենք ունեն հետևյալ մեծությունները՝

$$AB=8\text{մ}, h=10\text{մ}, MB=4\text{մ} \quad 8:10=4:x, 8x=40. x=5\text{մ}$$

M -կետի բացարձակ բարձրությունը կստացվի 125մ:

Նման ձևով կարելի է ստանալ ռելիեֆի ցանկացած կետերի բացարձակ բարձրությունները, բացառության թամբերի ,որի դեպքում կետը ընկած է լինում միևնույն բարձրության հորիզոնականների կտրվածքի մեծությանը մոտ ճշտությամբ:

ՏԵՂԱՆՔԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռելիեֆը և տեղանքի առարկաները տարբեր գույնակցությամբ և կլիմայի համակցությամբ առաջացնում են տեղանքի տարբեր ձևեր, որոնք էլ ազդեցության տեսակետից գնահատվում են ստորաբաժանման մարտական գործողությունների կազմակերպման և անցկացման ժամանակ:

Տեղանքի ձևերը մի դեպքում կարող են աջակցել ստորաբաժանումների հաջողությունների հասնելուն, իսկ մյուս դեպքում ցույց տալ բացասական ազդեցություն՝ մարտական գործողությունների վրա: Մարտական փորձը համոզիչ կերպով ցույց է տվել, որ նույն տեղանքը կարող է տալ մեծ առավելություն, նրան ով ավելի լավ կուսումնասիրի և հմտորեն կօգտվի:

Մարտի կազմակերպման և անցկացման համար տեղանքի ազդեցության աստիճանը փոփոխական է, այն փոխվում է մարտի վարման ձևից, մարտական գործողությունների զարգացումից, նոր զենքի և տեխնիկայի հայտնվելուց: Նորագույն զենքերը, ունենալով հզոր կրակային և ավերակիչ ուժ ընդունակ են ոչնչացնել ոչ միայն կենդանի ուժը և տեխնիկան, այլ նաև որոշակի չափով ավերակել և վերացնել տեղանքի առարկաները:

Միաժամանակ տեղանքը՝ հատկապես ռելիեֆի տարատեսակները, ինչպես նաև տեղանքի առարկաները, կարող են ունենալ որոշակի ազդեցություն՝ սովորական և միջուկային զենքի խոցման դեպքում:

Այսպիսով՝ տեղանքը իր առանձնահատկություններով կարող է ունենալ դրական և բացասական ազդեցություն՝ զորքերի մարտական գործողությունների հարձակման և պաշտպանման ժամանակ: Մարտակարգի կառուցման և մարտական տեխնիկայի կիրառման ժամանակից զանգվածային խոցման զենքից զորքերի պաշտպանության վրա և այլն:

Դրա համար էլ տեղանքը, ռազմական գործում, դիտվում է մարտական իրադրության կարևորագույն տարր:

Տեղանքի հատկությունները, որոնք ազդեցություն են ունենում մարտական գործողությունների կազմակերպման և վարման, մարտում տեխնիկայի զենքի կիրառման վրա, կոչվում են տեղանքի տակտիկական հատկություններ:

Նրանցից հիմնականները են՝ տեղանքի անցանելիությունը, տեղանքի քողարկիչ հատկությունները և դիտարկման պայմանները, կողմնորոշման պայմանները, կրակ վարելու պայմանները:

Առանձին շրջաններում մարտական գործողությունների վրա էական ազդեցություն են ունենում տեղանքի ինժեներական սարքավորումները, ջրամատակարարումը:

Տեղանքի անցանելիությունը – դա տեղանքի հատկություն է, որը նպաստում կամ սահմանափակում է զորքերի տեղաշարժը:

Ցանկացած տեղանքի անցանելիությունը առաջին հերթին որոշվում է ճանապարհային ցանցի առկայությամբ:

Որքան հզոր է ճանապարհային ցանցը, այնքան էլ անցանելի է տեղանքը, ստորաբաժանումների գործողությունների ժամանակ: Հատկապես մեծ է ճանապարհային ցանցի նշանակությունը անտառա – ճահճային, լեռնային և անապատային տեղանքում:

Տեղանքի անցանելիությունը, ճանապարհներից դուրս, կախված է հիմնականում ռելիեֆի բնույթից, հողաբուսական ծածկույթից, գետերի և լճերի առկայությունից և բնութագրից, տարվա ժամանակից, եղանակի պայմաններից:

Ռելիեֆի ազդեցությունը տեղանքի անցանելիության վրա որոշվում է նրա մասնատվածությունից, տարատեսակային դասավորվածությունից և բնութագրից, ինչպես նաև լանջերի թեքությունից:

Ճանապարհներից դուրս՝ տեղաշարժման ժամանակ, զորքերի համար էական և բնական արգելքներ են հանդիսանում ձորակները, հեղեղատները, գառիթափերը, փորվածքները, հողաթմբերը, ինչպես նաև կտրուկ լանջերով բարձունքներն ու փոսերը: Լանջերի թեքությունից կախված է մարդկանց և փոխադրամիջոցների և մարտական տեխնիկայի շարժման համար լուրջ արգելքներ են հանդիսանում ճահիճները, ջրածածկված տարածքները և աղոտային հողերը: Ըստ անցանելիության՝ ճահիճները լինում են անցանելի (մինչև 0,5մ), դժվար անցանելի (մինչև 0,8մ) և անանցանելի (0,8մ-ից ավելի):

Ռելիեֆի և հողաբուսական ծածկի (գրունտի) անցանելիությունը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ տեղանքի ստույգ կլիմայական պայմանները: Ձմռանը 0° –ից ցածր ջերմաստիճանի դեպքում հողաբուսական ծածկի անցանելիությունը բարելավվում է:

Ամռանը՝ անանցանելի ճահիճները ձմռանը սառչում են և կարող են ծառայել հարմար ճանապարհների՝ զորքերի տեղաշարժման և գործողությունների համար:

Անտառային տարածքների անցանելիությունը կախված է ճանապարհների և անտառուղիների առկայությունից, ինչպես նաև խտությունից, ծառերի հաստությունից և ռելիեֆի բնութագրից: Անտառում ծառերի միջև, վեց մետրից քիչ հեռավորության դեպքում ճանապարհից դուրս դժվարանում է մարտական տեխնիկայի շարժումը, երբեմն էլ անհնարին է դառնում:

Ճանապարհներից դուրս տեղանքի անցանելիության վրա մեծ ազդեցություն են ունենում գետերը, ջրանցքները, լճերը և ջրային տարածքները:

Կախված տեղանքի կտրտվածության աստիճանից արգելքները՝ ձորակները, գետերը, լճերը, ճահիճները, որոնք սահմանափակում են տեղաշարժ տեղանքում, լինում են երեք տեսակի՝ թույլ, միջին և ուժեղ կտրտվածության: Թույլ կտրված է համարվում այն տեղանքը,

որի զբաղեցրած մակերեսի մոտ 10%-ը արգելքներ են: Եթե արգելքները կազմում են 10%-ից քիչ կամ ընդհանրապես արգելքներ չկան, ապա տեղանքը համարվում է ոչ կտրտված:

Միջին կտրտվածության տեղանքը բնութագրվում է նրանով, որ արգելքները, որոնք դժվարացնում են շարժումը, կազմում են զբաղեցրած տարածքի 10-30% -ը: Եթե այդպիսի արգելքները գերազանցում են զբաղեցրած տարածքի 30%-ից ավելին, ապա այն համարվում է ուժեղ կտրտվածության տեղանք: Դա ստեղծում է բարենպաստ պայմաններ հակառակորդի առաջավոր դիրքերում երթարշավ կազմակերպելու համար, սակայն դժվարացնում է սեփական ստորաբաժանումների տեղաշարժը:

Տեղանքի պաշտպանիչ հատկությունները – դա տեղանքի հատկությունն է, որը թուլացնում է զանգվածային խոցման և սովորական զենքի գործոնների ազդեցությունը, թեթևացնում գորքերի պաշտպանության կազմակերպումը: Դրանք գլխավորապես որոշում են ռելիեֆի և բուսական ծածկույթի բնութագրից:

Լավ բնական թաքստոցներ կարող են ծառայել քարանձավները և ուրիշ ստորգետնյա կառույցներ: Փոքր ստորաբաժանումները որպես թաքստոցներ կարող են օգտագործել ռելիեֆի տարրերը (փոսեր, հեղեղատներ), ինչպես նաև արհեստական փոսերը և բարձունքները (ջրանցքներ, դամբանաթումբ, հողաթումբ և այլն):

Անտառային մեծ տարածքները համեմատած բաց տեղանքի հետ 2-ից 3 անգամ թուլացնում են միջուկային զենքի հարվածող ալիքի գործոնը: Խիտ լայնատերև և փշատերև անտառները լավ պաշտպանում են լուսային ճառագայթումից և նվազեցնում են թափանցող ռադիացիայի մակարդակը: Օրինակ՝ լուսային ճառագայթումը՝ հասուն անտառը նվազեցնում է 6-8 անգամ, համեմատած բաց տարածքի հետ, իսկ ռադիացիայի մակարդակը, հետևաբար, և անձնակազմի ճառագայթման չափը 20-40% քիչ է, քան ոչ անտառային տեղանքում:

Միջուկային զենքից լավագույն պաշտպանման հատկություն ունի միջին տարիք ունեցող խիտ անտառը և լայնատերև բարձր թփուտը: Երիտասարդ անտառում և թփուտում բացառվում է ծառերի ընկնելը:

Տեղանքի լավ պաշտպանիչ հատկություններ ունեն խորը լեռնագոգերը, ձորակները, կտրուկ լանջերով խանդակները և բլրոտ ռելիեֆը:

Լեռներում հարվածող ալիքի գործոնները կարող են հզորանալ և թուլանալ կախված միջուկային պայթյունի էպիկենտրոնից, լեռնաշղթայի և լեռնահովտի ուղղվածությունից: Այս

դեպքում խոցող գործոնները կարող են ուժեղանալ, ցաքուցրիվ թռչել քարերը, առաջանալ փլուզումներ և ձնհոսքեր:

Ամենաքիչ պաշտպանական հատկություններն ունեն անապատները, տափաստանային տեղանքը, բաց և հարթավայրային տեղանքները, որոնք աջակցում են միջուկային զենքի հարվածող ալիքի անարգել տարածմանը և օդի թունավորմանը:

Տեղանքի քողարկիչ հատկությունները և դիտարկման պայմանները – դա տեղանքի հատկություն է, որն աջակցում է հակառակորդից քողարկված զորքերի գործողություններին և դիտարկման միջոցով նրա մասին անհրաժեշտ տեղեկություններ ստանալուն: Դրանք որոշվում են շրջապատող տեղանքի տեսանելիության աստիճանից, տեսադաշտի հեռավորությունից որը կախված է ռելիեֆից, բուսածածկից, բնակավայրերի և այլ օբյեկտների բնութագրից, որոնք խոչընդոտում են տեղանքի դիտարկումը:

Տեղանքի քողարկման հատկությունները և դիտարկման պայմանները գնահատելիս նախ պետք է որոշել, որքանով են ռելիեֆը և տեղանքի առարկաները նպաստում դիտարկմանը կամ սահմանափակում տեսադաշտը: Կախված դրանից՝ տեղանքը ստորաբաժանում են երեք տեսակի՝ բաց, կիսաբաց և փակ:

Բաց տեղանքը զրկված է բնական քողարկումից, կազմավորված ռելիեֆի ձևերից, տեղանքի առարկաներից, կամ էլ դրանք կազմում են տվյալ տեղանքի մակերեսի 10%-ից ոչ ավելին: Նման տեղանքը թույլ է տալիս դիտարկել հրամանատարական բարձունքից համարյա ողջ տարածքը, որը ստեղծում է լավ պայմաններ մարտի դաշտը դիտարկելու համար, սակայն դժվարեցնում է քողարկումը և հակառակորդի կրակից ու դիտարկումից թաքնվելը: Հետևաբար բաց տեղանք շահավետ է ունենալ պաշտպանության առաջին գծում, ինչը կապահովի լավ դիտարկում, և հնարավոր կլինի մշտապես հետևել հակառակորդի գործողություններին և հեշտ խոցել նրան զենքի բոլոր տեսակներից:

Հարթ կամ բլրոտ ռելիեֆով, որի վրա բնական քողարկումը զբաղեցնում է այդ տարածքի մոտ 20%-ը, համարվում է կիսաբաց տեղանք: Բնական քողարկիչների առկայությունը լավ ապահովում է ստորաբաժանումների քողարկումը տեղանքում, իսկ եթե այն կազմում է 50%-ը, ապա տեղանքը դիտարկվում է հրամանատարական բարձունքներից:

Փակ տեղանքը թույլ է տալիս դիտարկել 25%-ից էլ քիչ տարածք:

Դա ստեղծում է լավ պայմաններ քողարկման և հակառակորդի կրակից թաքնվելու համար, սակայն դժվարացնում է զորքերի ղեկավարումը մարտում, զորքերի կողմնորոշումը և փոխհամագործակցումը մարտի դաշտում:

Կողմնորոշման պայմանները – դա տեղանքի այն հատկությունն է, որը թույլ է տալիս որոշելու սեփական տեղադիրքը և շարժման անհրաժեշտ ուղղությունը հորիզոնի կողմերի նկատմամբ, տեղանքի շրջապատող օբյեկտները, ինչպես նաև սեփական գորքերի և հակառակորդի գորքերի հարաբերական դասավորվածությունը: Դա որոշվում է տեղանքի ռելիեֆի տարրերի և տեղանքի առարկաների բնույթից, որոնք ակնհայտորեն առանձնանում են այլ օբյեկտներից իրենց արտաքին տեսքով կամ դիրքով և հարմար են օգտագործելու որպես կողմնորոշիչներ:

Ստորաբաժանումների գործողությունների ժամանակ կողմնորոշման պայմանների գնահատումն ունի հատուկ, էական նշանակություն, հատկապես լեռներում, անապատներում, տափաստաններում, անտառաճահճային տեղանքում, որտեղ քիչ են կողմնորոշիչները: Այս դեպքում օգտվում են նավիգացիոն սարքավորումներից և լուսային կողմնորոշիչներից:

Կրակ վարելու պայմանները – տեղանքի այս հատկությունը ապահովում է հակառակորդի դիտարկումից սեփական կրակային միջոցների տեղաբաշխումը և քողարկումը, որտեղից հնարավոր է արդյունավետ կրակ վարել՝ հրանոթից, ականանետից, հակատանկային և այլ կրակային միջոցներից, ճշգրտել կրակի ուղղությունները՝ հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և ինժեներական սարքավորումները վերացնելու համար: Դրանք կախված են ռելիեֆի, բուսածածկի, ճանապարհային ցանցի և տեղանքի տեղագրական այլ տարրերից: Կրակ վարելու պայմաններն ապահովելու համար հարկավոր է ընտրել տեղանքի այն հատվածները, որոնք զերծ են հակառակորդի դիտարկումից և անխոցելի կրակային միջոցներից, և միաժամանակ ընտրել հարմար դիրք հակառակորդի վրա արդյունավետ կրակ վարելու համար:

ՏԵՂԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղանքի ընդհանուր բնութագիրը սովորաբար տրվում է այսպիսի կարգով: Սկզբում տեղանքը բնութագրվում է տվյալ շրջանում գերիշխող ռելիեֆի ձևով և հողաբուսական ծածկով, որից հետո տեղանքի կտրվածության աստիճանով և դիտարկման քողարկման պայմաններով:

Կախված ռելիեֆի բնութագրից տեղանքը ստորաբաժանում են՝ հարթավայրային, բլրոտ և լեռնային, իսկ ըստ հողաբուսական ծածկույթի բնութագրի լինում են՝ անտառային,

ճահճային, տափաստանային և անապատային: Ցանկացած տեղանքին բնորոշ է իր տակտիկական հատկությունները:

Հարթավայրային տեղանքը հորիզոնի տեսանելի սահմաններում դիտվում է հարթ, կամ թույլ բլրոտ ձևով: Նման տեղանքին բնորոշ է լանջերի աննշան գառիթափություն (1-2⁰) և բացակայում են կտրուկ արտահայտված անհարթությունները:

Հարթ տարածքները կարող են լինել բաց, եթե նրանց վրա չկան տեղական առարկաներ, որոնք սահմանափակում են տեսադաշտը և դիտարկումը, կամ փակ, երբ տեղանքը ծածկված է անտառով, թփուտներով և կան շատ բնակավայրեր:

Հարթ տեղանքը սովորաբար մատչելի է բոլոր զորատեսակների առաջխաղացման համար և տեղաշարժումը հնարավոր է բոլոր ուղղություններով, ինչպես ճանապարհի, այնպես էլ՝ ճանապարհից դուրս, եթե դրանց չեն արգելակում բնահողի (գետնի հողաշերտի) վիճակը և անտառների առկայությունը:

Մեծաքանակ գետերի, լճերի և ճահիճների առկայության դեպքում, հարթ տարածությունը ձեռք է բերում կտրվածության հատկություն, որը սահմանափակում է մեքենաների շարժման հնարավորությունը ճանապարհից դուրս: Չոր եղանակին և սառնամանիքային պայմաններում հարթավայրը ծածկող կավային, ավազային և տորֆային բնահողերը թույլ են տալիս անարգել տեղաշարժեր կատարել:

Խոնավ ժամանակ այդպիսի բնահողերը դժվարացնում են շարժումը, իսկ հաճախ տեղանքը անանցանելի է դառնում:

Բլրոտ տեղանքը հարթավայրերից տարբերվում է բարձրությունների և խորությունների (իջվածքների) առկայությամբ, որոնք շատ դեպքերում ունեն ոչ կտրուկ 2-5⁰ վերելքներ և վայրէջքներ, որը հնարավորություն է տալիս բոլոր տեսակի մարտական մեքենաների շարժը: Այդպիսի տեղանքում բացարձակ բարձրությունները չեն գերազանցում ծովի մակերևույթից 500մ բարձրությունը:

Ռելիեֆի ամենատարածված ձևերից են՝ բլուրները (ոչ կտրուկ լանջերով մինչև 200մ):

Լեռնագոգերը (ձգված և աստիճանաբար մի ուղղությամբ իջնող խորություններ), ձորակները, հեղեղատները, խանդակները (կտրուկ գառիթափային լանջերով): Ռելիեֆի այս ձևերի բնութագրից կախված, տեղանքը կարող է լինել փակ կամ կիսափակ:

Բլրոտ ռելիեֆը չի դժվարացնում զորքերի տեղաշարժը և նույն պահին ապահովում է գաղտնի տեղաշարժը հակառակորդի կողմից կազմակերպված ցամաքային դիտարկումից, թեթևացնում է ընտրել մեկնարկային (կրակային) դիրքեր հրթիռային զորքերի և հրետանու

համար, ստեղծում է լավ պայմաններ հակառակորդի կողմից կիրառված զանգվածային խոցման գեների վնասող գործոններից պաշտպանվելու համար:

Բլուրների գագաթները կարող են օգտագործվել որպես դիտարկման կետեր, սակայն կախված տեղանքի կտրվածությունից կլինեն շատ չդիտարկվող տեղամասեր: Ստորաբաժանումների և մարտական տեխնիկայի համար համակենտրոնացման լավ բնական տեղեր են բլուրների և լեռնագոգերի հակառակ լանջերը: Դրանք հարմար են ականանետային կրակային դիրքերի, թաքստոցների և ապաստարաններ կառուցելու համար: Բլրոտ տեղանքում կարելի է ընտրել պաշտպանության համար հարմար, լավ բնական սահմաններ:

Լեռնային տեղանքն ունի ծովի մակարդակից 500մ բացարձակ բարձրություն: Լեռնային տեղանքի տարատեսակներն են՝ լեռնային – անտառային (սարեր, լեռներ), զգալի աստիճանով ծածկված անտառներով, բուսականությամբ, և լեռնաանապատային (սարեր, լեռներ, որոնք համարյա թե զրկված են բուսականությունից):

Լեռնային տեղանքի բնութագրման հատկություններն են համարվում ռելիեֆի կտրուկ կտրտվածությունը, դժվար անանցանելի տարածքների առկայությունը, ճանապարհների սահմանափակ քանակը:

Լեռներում հնարավոր են փլուզումներ, ձնհոսքեր, հողային հոսքեր, քարերի գլորումներ, հատկապես միջուկային պայթյունի ժամանակ:

Լեռնային տեղանքի բնութագրող հատկություններից են ռելիեֆի կտրուկ կտրտվածությունը, դժվար հաղթահարելի տեղամասերի առկայությունը, ճանապարհների սահմանափակ քանակը:

Լեռնային գետերն ունեն արագ հոսք, կտրուկ և հաճախ ջրի մակարդակի փոփոխություններ, քարքարոտ հատակ, բարձր կտրուկ ափեր: Լեռներում ճանապարհները սովորաբար անցնում են գետերի հարթավայրերով, լեռների լանջերով: Ճանապարհները, որպես կանոն, լինում են նեղ և ծուռումուռ, կտրուկ վերելքներով և վայրէջքներով: Լեռներում բացարձակ բարձրության մեծացման հետ մեկտեղ նվազում է մթնոլորտային ճնշումը: Մթնոլորտի նվազեցումից տանկերի և ավտոմեքենաների շարժիչի հզորությունն ընկնում է:

Լեռներում, կախված տեղանքի բարձրությունից, ինչպես նաև եղանակի կտրուկ և հաճախակի փոփոխությունից, տեղի են ունենում ջերմաստիճանի զգալի տատանումներ (յուրաքանչյուր 100մ բարձրանալիս լեռներում ջերմաստիճանն ընկնում է 0,5-0,6°): Մեծ բարձրություններում հնարավոր է ուժեղ քամիներ, մառախուղ, վարար անձրևներ, ձյան տեղումներ միաժամանակ հովիտներում կարող է պահպանվել չոր և տաք եղանակ:

Լեռնային տարածքների ավելի հարմար և անցման տեղերը կոչվում են լեռնանցքեր: Դրանք կազմված են հովիտներից, գոգահովիտներից և մեջքագոգային (թամբաձև) անցումներից: Հովիտի անդունդի բնութագրից է կախված ճանապարհից դուրս միջանցքով շարժման հնարավորությունը: Տեղափոխումը մեկ հովիտից մեկ այլ հովիտ իրագործվում է լեռնանցքերով: Լեռնանցքի հաղթահարելիությունը որոշվում է դեպի նրան տանող վերելքներից (նրանց երկարությունից և գառիթափությունից):

Միաժամանակ հարվածող ալիքի վնասող գործոնները ուղղված դեպի պայթյունը, և նեղ հովիտները ուղղորդված տարածվող ալիքները հզորանում են:

Միջուկային պայթյունների ժամանակ կարող են առաջանալ փլուզումներ, փլվածքներ, ձնհոսքեր և այլ:

Խորը հովիտներում և կիրճերում ՁԽԶ-ից առաջացած ճառագայթային վարակման մակարդակը, որպես կանոն, ավելի բարձր է քան բարձունքային տեղերում:

Լեռնային տեղանքի կտրուկ կտրտվածությունը աջակցում է քողարկմանը հակառակորդի ցամաքային և օդային ուժերի դիտարկումից, բարենպաստում ինժեներական արգելափակոցների կառուցմանը և ծուղակների կազմակերպմանը, դժվարացնում կողմնորոշումը և դիտարկումը: Լեռների անդրադարձնող գործոնը բացասական ազդեցություն է ցուցաբերում ռադիոկայանների աշխատանքների, օգտագործվող ռադիոտեխնիկական միջոցների և ձայնային հետախուզման վրա:

Լեռնային տեղանքը դժվարացնում է հարձակողական գործողությունների անցկացումը, տանկային և այլ տեխնիկայի օգտագործումը լեռներում սահմանափակ է: Զորքերի գործողությունների համար առավել մատչելի գործողությունները համարվում են գետերի լայն հովիտները և սարահարթերը:

Անտառային տեղանքին են վերաբերվում այն տարածքները, որոնց 50%-ից ավելի մակերեսը ծածկված է անտառով: Կախված ծառերի տեսակներից անտառը բաժանվում է՝

1. Փշատերև - եղևնի, աճար, մայրի, սոճենի, բրգաձև սոճի (եղևնի).
2. Տերևային – կեչի, կաղնի և այլն.
3. Խառը – տարբեր տեսակի ծառեր (եղևնի, կաղնի և այլն):

Անտառային տեղանքը ստեղծում է բարենպաստ պայմաններ քողարկման և գաղտնի տեղաշարժերի համար, ինչպես նաև ունի լավ պաշտպանական հատկություններ:

Անտառային տեղանքում դժվար է կազմակերպել դիտարկում, կողմնորոշվել տեղանքում, պահպանել հանձնարարված շարժման ուղղությունը, դրա համար հարկավոր է կարողանալ օգտվել կողմնացույցից և շարժվել ճանապարհների եզրերով և ազիմուտով:

Անտառային տեղանքը զգալի դժվարություններ է ստեղծում մարտական տեխնիկայի համար:

Անտառն ունի նաև բացասական հատկություն: ՋԽԶ-ից առաջացած հրդեհները կտրուկ նվազեցնում են անցանելիությունը և դժվարացնում զորքերի տեղաշարժը:

Անապատային տեղանքը աղքատ է ջրից և բուսականությունից, բիչ են բնակավայրերը, բնակչությունն ունի թույլ զարգացած ճանապարհային ցանց: Անապատի ռելիեֆը առավելապես հարթավայրային է: Կախված ծածկույթից տարբերում են՝ ավազային, կավային և քարքարոտ անապատներ:

Ամենատարածվածը համարվում է ավազային անապատը: Դրանք սովորաբար ունեն անհարթ վերնամաս, որոնք փոփոխվում են քամու ազդեցությունից:

Անապատի ավազը կարող է լինել ամրակցված (բլրային, քարային և ոչ ամրակցված բուսականությամբ):

Անապատային բույսի բաց հարթավայրային տեղանքը նպաստում է անձնակազմի և տեխնիկայի խոցման ՋԽԶ-ից: Մեծանում և երկարատևում է մակերևույթի ճառագայթային վարակման մակարդակը:

Ռելիեֆի միատեսակությունից և բուսածածկի բացակայության պատճառով անապատային տեղանքում կողմնորոշվելը դժվարանում է: Անապատում կողմնորոշումն իրականացվում է նավիգացիոն սարքավորումների, կողմնացույցների և երկնային լուսատուների միջոցով: Անապատային տեղանքը ստեղծում է ոչ բարենպաստ պայմաններ զորքերի քողարկման համար: Նման տեղանքում պարզ երևում է և առանձնանում են զորքերի մարտակարգը, կրակային և մեկնարկային դիրքերը, տեխնիկայի կուտակվածությունը: Կրակ վարելու և տեխնիկայի շարժման ժամանակ փոշի է բարձրանում և բացահայտվում նրանց գտնվելու վայրը:

Ճահճոտ տեղանքը սահմանափակվում է տեխնիկայի, իսկ ավելի հաճախ ստորաբաժանումների տեղաշարժը հետիոտնի կարգով: Ճահիճների անցանելիությունը որոշվում է կախված հողաբուսական տորֆային, ջրային, ինչպես նաև նրանում աճող տարբեր բուսականությունից:

Ճահճոտ տեղանքը պաշտպանության առաջնային եզրագծում դժվարացնում է հակառակորդի գործողությունները և դրանով նպաստում պաշտպանության կայունությանը: Ճահիճներով հարձակում նախատեսելիս հարկավոր է կազմակերպել մանրամասն հետախուզություն: Դժվար անցանելի ճագճոտ տեղանքներում համեմատաբար հաճախ հանդիպում են նեղ մասեր, որոնք հարմար են անցման համար: Ճահճոտ տեղանքում նման

անցատեղի նշան են հանդիսանում ծառերի բները, խիտ խոտածածկով մասերը և եղևնիների խիտ առկայությունը:

Այսպիսով՝ յուրաքանչյուր հրամանատար, նախքան մարտական գործողություններ կազմակերպելը, նախապես պետք է մանրամասն գննի և հետախուզի այն տարածքները, որտեղ պատրաստվում են անցկացնել այն:

Հարկավոր է հաշվի առնել այդ տեղանքի տարատեսակները և նրանց տակտիկական հատկությունները: Տեղանքի գնումը և գնահատումը հարկավոր է կատարել անմիջական դիտարկումով և գնումով, ինչպես նաև տեղագրական քարտեզներով և ատերոֆոտոհանույթներով:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՎՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ անհրաժեշտություն է առաջանում քարտեզով ուսումնասիրել ռելիեֆը, ջրագրությունը, բուսածածկը, բնակավայրերը, հաղորդակցման ճանապարհները, տարածքի յուրացվածության աստիճանը և քանակական ու որակական բնութագրերի, պայմանական նշանների և նրանց փոխկապակցվածության վերլուծության հիման վրա կազմել ուսումնասիրվող տեղամասի ողջ նկարագիրը: Այդ տեսակետից տեղագրական քարտեզները առավել տեղեկատու են և իրենց վրա պատկերվող տարածքների մասին բազմատեսակ բնութագրեր են ընդգրկում:

Տեղանքի նկարագրման մոտավոր կարգը լինում է հետևյալ ձևով.

1. Տեղամասի ծայրակետերի աշխարհագրական և ուղղանկյուն կոորդինատները:

2. Ռելիեֆի բնութագիրը. Տիպը (լեռնային, հարթավայրային և այլն), ձևը, բնորոշ լեռնագրական գծերը և կետերը, բարձությունների տարբերությունը, լանջերի զառիթափության և թեքության բնույթը, քանակական ցուցանիշներով հորիզոնական և ուղղաձիգ կտրտվածության աստիճանը:

3. Ջրագրությունը. ա) գետերը – ակունքների նիշերը, հոսանքի ուղղությունը և արագությունը, հունի լայնությունը և խորությունը ավերի բնույթը, կամուրջների տիպերը, նրանց բեռնատարողությունը, անցահունների առկայությունը, ջրագծերի բարձրությունը, հունի կառուցվածքը (գալարականությունը, կղզիների, գետաբազուկների, վտակների առկայությունը), գետաբերանի և նրա տարբեր մասերում թեքությունների բնույթը, բ) լճեր – ավազների բնույթը, ձևը, խորությունը, ջրագծերը, տեղադիրքի բնույթը, կապը ռելիեֆի և

գետերի հետ, գ) ջրագրության այլ տարրերը (ջրանցքներ, առուներ, աղբյուրներ, ջրհորներ և այլն):

4. Ճահիճներ – կախված ռելիեֆի բնույթից նրանց տեղադիրքը, անցանելիության և բուսականության բնութագիրը, տնտեսական օգտագործումը:

5. Բուսականությունը – տիպը, կախվածությունը ռելիեֆի և ջրագրական ցանցի բնույթի, քանակական և որակական բնութագիրը (անտառները բնութագրելիս՝ նրանց մակերեսը, անտառածածկի տոկոսը, տեսակային ու հասակային կազմը և այլն):

6. Բնակավայրերը – նրանց տիպը, տեղաբաշխումը (գետերի, լճերի ռելիեֆի, ջրբաժան տարածքների, ճանապարհային ցանցի նկատմամբ հարմարվածությունը), պլանավորումը (հավաք և ցրված, թաղամասային և անհամակարգ և այլն), տնտեսական և մշակութային նշանակությունը, արդյունաբերական, տնտեսական և մշակութային նշանակությունը, արդյունաբերական, տնտեսական և մշակութային օբյեկտների տեղաբաշխումը, կապը հաղորդակցության ճանապարհի հետ:

7. Հաղորդակցության ճանապարհը և կապի միջոցները – նրանց տիպերը, ռելիեֆի և տեղանքի այլ առանձնահատկությունների ազդեցությունը նրանց վրա (լիցքեր, հանույթներ, թեքություններ, լայնություններ), կամուրջների առկայությունը և նրանց բնութագրերը, ճանապարհների հատումը և միացումը, ծածկույթը, եզրատնկումների բնույթը և այլն:

Աշխատանքի արդյունքները տեքստի ձևով կարելի է ինքնուրույն ներկայացնել 3-4 էջ ծավալով:

Տեղամասի նկարագրերը կարելի է կատարել

y – 34 – 37 – B, y – 34 -37 – B – B և y – 34 -37 - B – B – 4 համարակալված քարտեզներով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ**

Մարտական գործողություններն անցկացվում են տեղանքում կամ սերտորեն կապված են տեղանքի հետ: Ցանկացած ստորաբաժանում կամ հետախուզական խմբավորում դուրս գալով տեղանք, կատարում է մարտական առաջադրանքներ և լուծում տարբեր նպատակներ ունեցող խնդիրներ: Այս առաջադրանքները և խնդիրները իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տեղանքի տարատեսակները և տակտիկական հատկությունները: Տեղանքը իր հերթին լինում է հարթ, բլրոտ և լեռնային, որոնք իրենց

դրական կամ բացասական ազդեցությունն են թողնում մարտական բոլոր տեսակի խնդիրների և առաջադրանքների կատարման վրա: Յուրաքանչյուր տեղանք, դա լինի հարթ, բլրոտ թե լեռնային իր տակտիկական հատկություններով մի կողմից նպաստում են այդ խնդիրներն իրականացնելուն մյուս կողմից խոչընդոտում:

Այստեղ է, որ յուրաքանչյուր հրամանատար պետք է ունենա համապատասխան գիտելիքներ, ունակություններ և կարողանա այն փոխանցել իր ենթականերին: Առավել բարդ է մարտական խնդիրների առաջադրանքների կատարումը լեռնային պայմաններում, եթե հաշվի չառնենք նրա յուրահատկությունները:

Հայաստանի Հանրապետության սահմանները հարևան պետությունների հետ կազմում են մոտ 1431 կմ: Դրանք բաժանվում են լեռնաշրջաններով, այդ թվում՝ 913 կմ Ադրբեջանի, 280 կմ Թուրքիայի, 196 կմ Վրաստանի և 42 կմ Իրանի հետ: Միջին Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1830մ, իսկ ամենափոքրը 375մ՝ վրացական սահմանի Դեբեդ գետի հովտում: ՀՀ սահմաններում բարձրությունները տատանվում և կազմում են 2900-3900մ:

ՀՀ սահմանային գոտիների բարձրությունները տրված են աղյուսակ 1-ում:

Լեռան անվանումը և տեղը	Բարձրությունը մ-ով
Ամասիայի շրջանում Թուրքիայի սահմ.	3042մ
Աչքասար լեռ Վրաստանի սահմ.	3196մ
Մուրղուզ լեռ Ադրբեջանի սահմ.	2999մ
Կաղաթաղ լեռ Ադրբեջանի սահմ.	2901մ
Շահդաղի լեռնաշղթա Ադրբեջանի սահմ.	3367մ
Վարդենիս լեռ Ադրբեջանի սահմ.	3522մ
Ծղուկ լեռ Ադրբեջանի սահմ.	3561մ
Գոզի լեռ Նախիջևանի սահմ.	3120մ
Միսիանի լեռնանցք Նախիջևանի սահմ.	2346մ
Կապուտջուղ Նախիջևանի սահմ.	3904մ
Հայկական պար Թուրքիայի սահմ.	3246մ
Փոքր Արարատ Թուրքիայի սահմ.	3914մ

Վերը նշված տեղանքներում առաջադրանք կատարող ստորաբաժանումները չունենալով լեռնային պայմաններին յուրահատուկ պատրաստություն, գիտելիքներ և ունակություններ, չեն կարող կատարել իրենց առջև դրված խնդիրները, կարող են ունենալ մեծ կորուստներ, ինչը կհանգեցնի անցանկալի հետևանքների: Յուրաքանչյուր զինծառայող պետք է պատրաստ լինի ամեն տեսակ անակնկալների, ունենա համապատասխան գիտելիքներ և ունակություններ լեռնային պայմաններում գործելու համար:

Ուստի առավել կարևոր ուշադրություն պետք է դարձնել լեռնային պայմաններում մարտական գործողություններին նախապատրաստվելու (հարձակում, պաշտպանություն), լեռնային տեղանքը հաղթահարելու պայմանների և պահանջների վրա:

Լեռնային պայմաններում իրականացվող մարտական գործողությունների վառ օրինակ է Չեչնիայի տեղային ահաբեկչական խմբավորումների դեմ ուղղված գործողությունները, որտեղ մեծ հաջողությունների է հասնում այն ստորաբաժանումը, որն ունի լեռնային տեղանքին համապատասխան բարձր մարտական պատրաստություն:

Ստորաբաժանումների գործողությունների յուրահատկությունը լեռներում կապված է բարձր լեռնային պայմաններում օդի ջերմաստիճանը, խտությունը և մթնոլորտային ճնշումը նվազում է: Տեղումների քանակը և քամիների արագությունը աճում է, իսկ երկարատև ձմռան շրջանում ավելանում է նաև ուժեղ սառնամանիքը և խորը ձնածածկը:

Այսպես՝ օրինակ, յուրաքանչյուր 100մ բարձրանալիս օդի ջերմաստիճանը նվազում է միջինում 0,6 աստիճան, մթնոլորտային ճնշումը 8-10մմ, օդի խոնավությունը 1,2%, իսկ ձնածածկի տևողությունը ավելանում է 8-10օր: Եթե Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային լանջերում 500մ բարձրության վրա ձյան ծածկույթը պահպանվում է 100 օր, ապա 3500մ բարձրության վրա պահպանվում է 200 օր և ավելի:

Ցածր ջերմաստիճանը և օդի նոսրությունը լեռներում զգալիորեն ազդում են մարտական տեխնիկայի և օդային փոխադրամիջոցների աշխատունակության վրա, նվազում է շարժիչի հզորությունը և շարժման արագությունը, մեծանում է վառելիքի ծախսը և հովացման սիստեմի ջրի գոլորշիացումը: Լեռներում, ի տարբերություն հարթավայրերի, տրանսպորտային միջոցների բեռնատարողությունը նվազում է 20-25%, իսկ արագությունը՝ մոտավորապես 2 անգամ: Լեռնային ճանապարհներում վառելիքի ծախսն ավելանում է 75%-ով: Ջրի եռման աստիճանը յուրաքանչյուր 1000մ բարձրության վրա նվազում է 3,2 աստիճան, ինչը բարձրացնում է ջրի գոլորշիացումը:

Տարբեր բարձրություններում մթնոլորտի ճնշումը և ջրի եռման աստիճանը նշված է 2 աղյուսակում:

Բացարձակ բարձրություն (մ)	Մթնոլորտային ճնշումը (մմ)	Ջրի եռման աստիճանը
0	760.0	100.0
500	716.0	97.9
1000	674.1	96.7
1500	634.7	94.5
2000	596.2	93.6
2500	561.0	91.5
3000	525.8	89.7
4000	402.3	97.0
5000	405.1	82.7

Վերը նշված աղյուսակում երևում է, որ որքան բարձր է տեղանքը, այնքան փոքր է օդի ճնշումը: 2000մ բարձրության վրա, մարդկանց մոտ առաջանում է արյան անբավարարվածություն (քաղց) և ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածության դեպքում արագանում է սրտի աշխատանքը, որը հանգեցնում է գլխապտույտների: 3000 մետրից ավելի բարձրության դեպքում նկատվում է լեռնային հիվանդությամբ զանգվածային հիվանդացում: Դրա պատճառը կարող է հանդիսանալ թույլ առողջական վիճակը կամ կլիմայական վարժանքների բացակայությունը: Այդ հիվանդության ախտանիշներ են հանդիսանում գլխացավը, սրտխառնոցը, փխսումը, ախորժակի բացակայությունը, անքնությունը և ջղագրգռությունը: Այդ իրավիճակը կարող է թեթևացնել հանգիստը: Այդ ժամանակ միայն բացառիկ դեպքերում է թույլատրվում հիվանդին իջեցնել ավելի ցածր տեղանք: Նման շրջաններում, համեմատած հարթավայրերի հետ, 1,5-2 անգամ նվազում է հակազագերի օգտագործման հուսալիությունը:

Ստորաբաժանումներում և հետախուզական խմբերում ընտրվում են ֆիզիկապես ամուր, կոփված զինձառայողներ, որոնք վաղօրոք նախապատրաստվում են լեռնային պայմաններում գործելուն: Մեծ բարձրություններում՝ արևի շողերով տաքացած օդը ավելի ցայտուն է դառնում մարդու օրգանիզմի վրա: Սովորաբար ամպերից վեր արևի ջերմությունը և լույսը ավելի շատ է քան նրանից ցած: Ջերմաստիճանի տարբերությունը արևի տակ և ստվերում երբեմն հասնում է 10 աստիճանի: Լեռնային շրջաններում դուրս գալուց ստորաբաժանման անձնակազմին խորհուրդ է տրվում օգտվել հատուկ պաշտպանական միջոցներից, որպեսզի խուսափեն կուրացումից, արևահարումից, այրվածքներից, որոնք կարող են առաջանալ ձյան ծածկույթի և ամպերի, արևի լույսի և ճառագայթների ուժեղ անդրադարձումից: Աչքերի պաշտպանման համար, նման դեպքում, ստորաբաժանման անդամներն օգտագործում են լուսազտիչով հատուկ ակնոցներ, իսկ մաշկի պաշտպանման համար հատուկ քսուքներ: Լեռնային շրջաններում, եղանակը՝ մեկ օրվա ընթացքում, կարող է ենթարկվել կտրուկ փոփոխությունների, անձրևը, ձյունը, պայծառ արևը, ամպամած եղանակը փոթորիկը և ուժեղ քամիները կարող են հաճախ միմյանց փոխարինել: Օդի ջերմաստիճանը կարող է կտրուկ նվազել մայրամուտից հետո՝ քամիների ուղղության փոփոխությունից և ամպամածությունից: Օրինակ 2000 մետրից ավելի բարձր լեռնային տեղանքի հարավային լանջերում ցերեկը շոգ է, սակայն գիշերը բաց ջրամաններում և ջրամբարներում ջուրը կարող է սառչել: Ջերմաստիճանի տարբերությունը լեռներում՝ գիշերը և ցերեկը, հասնում է 10-20 աստիճանի, նման կտրուկ փոփոխությունները կարող են առաջացնել մրրիկները և փոթորիկները: Լեռներում ստորաբաժանման գործողության համար մեծ արգելքներ են հանդիսանում ամպրոպները, և մեծ վտանգ են ներկայացնում կայծակահարումները: Ավելի հաճախ դա կարող է լինել լեռնաշղթայի երկայնությամբ՝ բարձունքների գագաթներին, ստորաբաժանումների շարժման կամ տեղակայման ժամանակ: Ուստի մինչև ամպրոպները սկսվելը՝ հարկավոր է իջնել լեռնաշխթայի բարձունքներից և գագաթներից և դադարեցնել հետագա շարժումը: Ամպրոպների ժամանակ շարժումը կարելի է միայն շարունակել բացառիկ դեպքերում՝ օրինակ հակառակորդի կողմից վտանգի սպառնալու կամ առաջադրված խնդրի շտապ կատարման անհրաժեշտության դեպքում: Նման դեպքերում երթուղին ընտրվում է ոչ թե ժայռային լեռնաշղթաներով, այլ նրանց շրջանցումներով, չնայած նման ճանապարհը կարող է լինել ավելի երկար և բարդ:

Լեռներում սովորական երևույթներից է մառախուղը, որը նվազեցնում է տեսանելիությունը, դժվարացնում ստորաբաժանումների գործողությունները, և նման պայմաններում մեծանում է դժբախտ պատահարների քանակը: Ինչպես հայտնի է

մառախուղն իր մեջ պարունակում է մեծ խոնավություն, և թրջվելուց, ցրտից պաշտպանվելու համար անհրաժեշտ է ունենալ լրացուցիչ հագուստ: Մառախուղը աղավաղում է տեսանելի առարկաների պատկերը և հեռավորությունը, ինչպես նաև դժվարացնում է կողմնորոշումը տեղանքում: Տեղանքում տեղաշարժման ժամանակ, երբ չկան պարզ տեսանելի կողմնորոշիչներ, անհրաժեշտ է ունենալ կողմնացույց, քարտեզ, և հաճախակի կատարել հաշվարկ անցած ճանապարհի վերաբերյալ: Ամպամած և մառախլապատ եղանակին, նույնիսկ ցերեկ ժամանակ, ստորաբաժանումը կարող է քողարկված տեղաշարժվել, հաղթահարել հակառակորդի տեղակայման առաջնային գիծը, կամ կազմակերպել հանկարծակի գործողություններ հակառակորդին գերելու և ոչնչացնելու համար:

Լեռնային պայմաններում մեծ վտանգ է ներկայացնում ձյունը: Հարթ, կտրուկ թեքության վրա նստած չոր ձյունը կարող է շարժվել և առաջացնել ձնհոսք, որն աճող արագությամբ կարող է շարժվել դեպի ցած, իր հետ տանելով ճանապարհին գտնվող ամեն ինչ: Առավել վտանգավոր ձնհոսք կարող է լինել 2-3 օր առաջ տեղացած ձյունից: Ձնհոսքերը ավելի հաճախ առաջացնում են 15-ից 60 աստիճան թեքություն ունեցող լանջերում, 30-40 սմ ձյան շերտի դեպքում:

Ձնհոսքային վտանգավոր տեղանքում՝ ստորաբաժանումները, հետախուզական խմբերը պետք է անցնեն արագ և հատուկ զգուշությամբ: Ավելի անվտանգ տեղաշարժվելու համար խորհուրդ է տրվում անցնել լանջերի վերին մասով՝ անմիջականորեն ժայռերի տակով: Ստորաբաժանումներին, հետախուզական խմբերին, որոնց առջև խնդիր է դրված հաղթահարել նման հատվածները անհրաժեշտ է ունենալ 25-30 մետր երկարությամբ փրկարարական գունավոր պարաններ: Մի ծայրը հարկ է փաթաթել գոտկատեղին, իսկ մյուսը թողնել ազատ: Փրկարարական պարանների առկայությունը հեշտացնում է մարդկանց փնտրումը ձնածածկերի տակից, քանի որ պարանի ազատ մասը ձյան շերտի վրա հեշտ է նկատվում, և նրանց հայտնաբերումը արագացնում: Ստորաբաժանման անձնակազմը կամ հետախուզական խմբի անդամները շարժման ընթացքում պետք է պահպանեն իրար միջև ընկած տարածությունը, կապված տեղանքի (գոտու) վտանգավորությունից: Բայց և այնպես բոլոր պայմաններում անհրաժեշտ է խիստ պահպանել տեսանելի կապը: Եթե անձնակազմի անդամներից որևէ մեկն ընկնում է ձնհոսքի տակ և նրա վրա լցվում է մեծ քանակությամբ ձյուն, այդ դեպքում ձյան մակերևույթի վրա մնալու համար, հարկ է կատարել լողացող մարդուն նմանվող շարժումներ: Մակայն նախընտրելի է խուսափել և շրջանցել ձնհոսքային վայրերը: Դրա համար հարկավոր է հատուկ ճանաչել ձնհոսքային վտանգավոր լանջերը և երթուղին նշել շրջանցման կարգով:

Իսկ ավելի կարևոր է մինչև տեղանք դուրս գալը՝ ստորաբաժանման կամ հետախուզական խմբի կողմից քարտեզով մանրակրկիտ ուսումնասիրել և նշել առավել անվտանգ շարժման երթուղիները: Առավել մեծ վտանգ են ներկայացնում լեռնային պայմաններում սողանքները, փլուզումները, քարահոսքերը: Նման տեղերը հարկավոր է շրջանցել, իսկ այն դեպքում երբ շրջանցումը հնարավոր չէ, հատկապես քարահոսքերի ենթակա տեղանքում, այդ հատվածը հարկավոր է հաղթահարել շատ զգույշ և առանձին:

Օդի մեծ թափանցելիությունը, լեռնաշղթաների և լանջերի տարատեսակ լուսավորվածությունը հաճախակի հանգեցնում է տեսողության խաբուսիկության: Առանձին տեղային առարկաները պարզ թափանցիկ օդում ավելի մոտ են երևում: 20կմ հեռավորության վրա գտնվող գագաթը անգեն աչքով դիտելիս, կարծես գտնվում է 6-8կմ հեռավորության վրա: Խորը անդունդները, ձորակները և լանջագոգերը անորոշելի են դարձնում լեռնաշխթանների և բարձրակատարների միջև ընկած հեռավորությունը: Հաճախ առարկաները գտնվելով իրարից հեռու տարբեր լեռնաշխթանների վրա բավականին մոտ են երևում: Արևով լուսավորված տեղանքը նույնպես զգալի մոտ է երևում քան իրականում կա: Ուստի մինչև լեռնային տեղանք դուրս գալը ստորաբաժանման հետախույզները պետք է վարժվեն տեղանքում աչքաչափով չափումներ կատարելուն: Հիշենք, որ փորձված աչքը կարող է սխալվել 10-15%, իսկ անփորձության դեպքում մինչև 50% ինչը՝ կհանգեցնի անցանկալի հետևանքների՝ ոչ ճիշտ հաշվարկներ կատարելուն, իսկ հետախուզում կազմակերպելիս՝ հատկապես դիտարկման ժամանակ հարկավոր է հաշվի առնել այս յուրահատկությունները: Լեռնային շրջաններում բուսականությունը բավականին տարատեսակ է՝ խիտ դժվարանցելի, մերձարևադարձային և տայգայական, մինչև աղքատիկ անտառները:

Բարձրության ավելացման հետ մեկտեղ բուսական գոտիները լանջերում փոփոխական են, անտառային վերին սահմանում կախված նրանց տեղադիրքից, կարող է լինել տարբեր, որքան հյուսիսային է, բարձր և լեռները կտրուկ են, այնքան քիչ է բուսականությունը: Լեռնային անտառները գորքերի և հետախուզական խմբավորումների համար ծառայում են որպես լավ քողարկիչ պայմաններ, և միաժամանակ նրանց համար հանդիսանում են լուրջ արգելքներ: Ինչպես բուսականությունը, այնպես էլ կենդանական աշխարհը տարատեսակ է, և դա հիմնականում կախված է լեռների տեղադիրքից և բուսականության բնութագրից:

Լեռներում շատ կան մշտական բնակվող և չվող թռչուններ, թեկուզ և կենդանական աշխարհը անմիջականորեն ոչ մի կապ չունի մարտական գործողությունների հետ, լեռներում այնուամենայնիվ ստորաբաժանումները, հետախուզական խմբերը, առանձին

հետախույզները պետք է իմանան կենդանիների և թռչունների վարքագիծը և խելացիորեն վարվեն իրենց գործողությունների ժամանակ:

Լեռնային տեղանքում մարտական գործողությունների նախապատրաստման, կատարման նախապայմաններից է նաև՝ դիտարկման և հանգստի համար նախատեսված թաքստոցների կառուցման և սարքավորման աշխատանքները:

Հյուսիսային և լեռնային շրջաններում ձմռանը սարքավորված թաքստոցներն առաջին հերթին պետք է ծառայեն, որպես ցրտից պաշտպանվելու միջոց, միաժամանակ ապահովեն անձնակազմի անվտանգությունը: Թաքստոցների պատրաստման համար հարկավոր է հնարավորության դեպքում տեղ ընտրել անտառում: Անտառը պաշտպանում է սառը քամիներից և ապահովում է լավ քողարկում: Բացի այդ անտառը կարելից է օգտագործել որպես շինանյութ՝ ինժեներական աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև վառելիք՝ անձնակազմի տաքացման և սննդի պատրաստման համար: Եթե մոտակայքում չկան անտառներ կամ թփուտներ, ապա թաքստոցի համար հարկավոր է ընտրել քամիներից պաշտմանված վայրեր: Քանի որ հյուսիսային շրջաններում և լեռներում հաճախակի և շատ արագ եղանակը փոփոխվում է, ուստի նման վայրերում գործող հետախույզները պետք է կարողանան արագ սարքավորել ձյունից պաշտպանման համար ժամանակավոր թաքստոցներ:

Խորը ձյունածածկ տեղանքում հասարակ թաքստոցներ կարող են հանդիսանալ ձյունափոսերը: Եթե ժամանակ չկա թաքստոց պատրաստելու համար անհրաժեշտ է ձյունակույտում փորել փոս (անձավ) նրա մեջ դնել թփեր, ծառի ճյուղեր, խոտ և մուտքը ծածկել անձրևանոցային վրանիկով: Նման սարքավորված փոսում կարելի է կազմակերպել հանգիստ և սպասել եղանակի բարելավմանը: Նմանատիպ թաքստոցներում հետախույզները եթե երկար ժամանակ են մնում, ապա այնտեղ պետք է պատրաստեն տեղաշորի, կրակ վառելու, իրերի պահպանման տեղեր, ինչես նաև օդափոխման և ծխնելույզի համար անցքեր: Կրակ վառելիս անհրաժեշտ է զգուշություն ցուցաբերել, որպեսզի չայրվեն տեղաշորը, պահուստային փայտը, ճյուղերը և զգույշ լինել ծխագազահարումից: Որքան էլ, որ տաք լինի թաքստոցում քնապարկի մեջ քնելիս, ամեն դեպքում պետք է քնապարկի տակ լցնել ծառի ճյուղեր, ծղոտ, թփեր, որպեսզի բարձր լինի գետնից և 40-50 սմ հեռու կրակից: Եթե թաքստոցում տեղավորված են մի քանի մարդ, ապա դրանցից մեկը մշտապես պետք է հերթապահի, որը պետք է հետևի կրակին և ապահովի մյուսների անվտանգ հանգիստը, կոշիկների և հագուստի չորացմանը և սննդի պատրաստմանը:

Այսպիսով՝ լեռնային տեղանքին բնորոշ բոլոր առանձնահատկությունները մեծ կարևորություն ունեն հատուկ առաջադրանքներ և մարտական գործողություններ կատարող ստորաբաժանումների համար: Դրանց անհրաժեշտությունը վկայում են Հայրենական մեծ պատերազմի ճակատներում, Աֆղանստանի և Չեչնիայի մարտական գործողությունները: Այն գիտակ հրամանատարները, որոնք վերոհիշյալ պահանջները ճիշտ են օգտագործել հասել են հաջողության:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ

Տեղանքի մասին առավել լրիվ և մանրամասն տվյալներ է պարունակում տեղագրական քարտեզը:

Երկրագնդի մակերեսի, նրա վրայի բոլոր օբյեկտների փոքրացված, ճշգրիտ, մանրամասնորեն և ակնառու պատկերումը հարթության վրա կոչվում է տեղագրական քարտեզ:

Տեղագրական քարտեզի մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախ ուսումնասիրել տեղանքի տեղագրական տարրերը: Տեղանք ասելով հասկացվում է երկրի մակերևույթի որոշակի տեղամասը, որի վրա նախատեսվում է կատարել տրված առաջադրանքը:

Տեղանքի հիմնական տեղագրական տարրերից են ռելիեֆը և տեղանքի առարկաները: Երկրի մակերևույթը կազմող անհարթությունները կոչվում են տեղանքի ռելիեֆ, իսկ նրա վրա գտնվող բնական և արհեստական առարկաները՝ տեղանքի առարկաներ: Ըստ ռելիեֆի բնույթի՝ տեղանքը լինում է **հարթավայրային, բլրոտ ու լեռնային**: Տարբեր խոչընդոտներով (ձորակներով, հովիտներով, խրամուղիներով և այլն) կտրտվածության աստիճանով այն բաժանվում է **խիստ կտրտված, միջին կտրտված և թույլ կտրտված** տեղանքների: Քողարկման և դիտարկման պայմանների տեսակետից տեղանքը կարող է լինել **փակ, կիսափակ և բաց**:

Տեղանքը ունի նաև տակտիկական հատկություններ: Ռելիեֆի և տեղանքի առարկաների բնույթը որոշում են տեղանքի տակտիկական հատկությունները, այսինքն նրա ազդեցությունը մարտի կազմակերպման և վարման, մարտական տեխնիկայի կիրառման, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման, քողարկման և անցանելիության վրա: Մարտական գործողությունների վրա հատկապես մեծ ազդեցություն է թողնում

ռելիեֆը: Հովիտները (խանդակները, ձորակները) մարդկանց և տեխնիկան պատսպարում են թշնամու դիտարկումից ու կրակից, միննույն ժամանակ դրանք բնականաբար հանդիսանում են բնական արգելքներ և խոչընդոտներ: Գոյություն ունեցող բոլոր քարտեզներն ունեն մի ընդհանուր նպատակ՝ քարտեզից օգտվողին հնարավորություն տալ աշխատասենյակում կամ տեղանքում ծանոթանալու բնությանը: Մարդկության զարգացման սկզբնական շրջանում քարտեզը կամ հասարակ գծագրերն ունեցել են շատ սահմանափակ նշանակություն, քանզի գործնական նշանակությունը աճել է կապված արշավանքների և լայնատարած տարածքների գրավման հետ: Քարտեզի դերը առանձնապես մեծացավ ռազմական տակտիկայի նոր ձևերի և ռազմական տեխնիկայի զարգացման հետ կապված, երբ բանակի առանձին ստորաբաժանումներ սկսեցին գործել իրարից անկախ մեծ հեռավորությունների վրա: Ժամանակակից ռազմական գործողությունների ընթացքում տեղագրական քարտեզն ունի էլ ավելի մեծ նշանակություն. ամեն մի ստորաբաժանման համար կազմում են առանձին քարտեզ այն հաշվով, որ նա բավարարի գերազանցապես սովյալ բնույթի ստորաբաժանումների պահանջները (տանկային զորամասերի համար նախատեսված քարտեզը չի կարող բավարարել ավիացիոն ստորաբաժանումներին): Հաշվի առնելով այս ամենը՝ քարտեզը համարվում է բանակի տեղաշարժի և ռազմական գործողությունների ուղեցույց: Բանակի համար կազմվող քարտեզներն հիմնականում ստորաբաժանված են **ստրատեգիական** և **տակտիկական**:

Ստրատեգիական քարտեզները ունենում են համեմատաբար փոքր մասշտաբներ. նրանք օգտագործվում են գերազանցապես ընդհանուր ղեկավարության և ուղղություն ցույց տալու համար:

Տակտիկական քարտեզներն օգտագործվում են անմիջապես ռազմական գործողության ընթացքում ինչպես զորամասերի տեղաշարժման ժամանակ, նույնպես և կրակային միջոցներ օգտագործելու համար: Փոքր մասշտաբի ռազմական քարտեզները (տակտիկական) օգտագործվում են նաև ամիջապես դաշտային ռազմական գործողությունների ընթացքում միջին և մեծ հեռավորության բալիստիկ հրթիռներ բաց թողնելու համար: Գոյություն ունեցող քարտեզները կարելի է ստորաբաժանել նրանց հատկանիշների հիման վրա՝ ըստ մասշտաբի գրաված տարածքի, բովանդակության, գույների և թերթերի քանակի: Մրանից ամենակարևորը առաջին երեք հատկանիշներ են, որոնք մեծ կիրառություն ունեն: Ըստ տարածքի մեծության դասակարգումը կատարվում է ընդհանուրից դեպի մասնավորը, տարբերում են աշխարհի, կիսագնդերի, օվկիանոսների, աշխարհամասերի, մայրցամաքների խոշոր հատվածների, պետությունների, երկրամասերի, մարզերի շրջանների քարտեզներ:

Ըստ մասնագիտության դասակարգելիս տարբերակում ենք **ընդհանուր աշխարհագրական** և **մասնագիտական(թեմատիկ)** քարտեզներ:

Ընդհանուր աշխարհագրական քարտեզներում պատկերվում են երկրի մակերևույթի ձևերը, գետերը, լճերը, խոշոր քաղաքները, պետությունները և այլն; Դրանք հիմնականում ուսումնական քարտեզներ են: **Թեմատիկ քարտեզներն** ունեն նեղ մասնագիտական բռնադակություն, վերաբերում են այս կամ այն բնագավառի: Օրինակ՝ երկրաբանական, կլիմայական, հանքային հարստությունների, հողերի, բուսականության, կենդանական աշխարհի, բնակչության, ծովային ուղիների, արդյունաբերության, գյուղատնտեսական քարտեզներ: Կան ավելի սահմանափակ կիրառելի թեմատիկ քարտեզներ ևս՝ նվիրված առանձին վերցված երևույթի, օրինակ՝ քամիների, ծովային հոսանքների, բնակչության արտագաղթի ու ներգաղթի, ռազմական գործողությունների:

Տեղագրական քարտեզները հիմնականում բաժանվում են երեք խմբի՝

- 1.Տեղագրական քարտեզներ.
- 2.Ակնարկային տեղագրական քարտեզներ.
- 3.Ակնարկային քարտեզներ:

1.Տեղագրական քարտեզները կազմվում են տարբեր մասշտաբներով, որոնք օգտագործվում են զանազան բնագավառներում՝

- ա) ժողովրդական տնտեսության մեջ,
- բ) ռազմական գործում,
- գ) հետազոտական և գիտական աշխատանքների ընթացքում:

Ներկայումս օգտագործվող տեղագրական քարտեզների համար ընդունված մասշտաբներն են՝

1:5000,1:10000, 1:25000, 1:50000, 1:100000, 1:200000:

2.Ակնարկային տեղագրական քարտեզները բնության մասին տալիս են ընդհանուր տեղեկություններ, ընդգրկում են ավելի մեծ տարածքներ ,ունեն օգտագործման խիստ բազմազան բնագավառ:

Նրանք կիրառվում են խոշոր շրջանների ուսումնասիրության դեպքում, ծառայում են որպես ելման սկզբնաղբյուր իրենցից փոքր մասշտաբի քարտեզներ կազմելու, ավիացիայի և այլ նպատակների համար: Ակնարկային տեղագրական քարտեզները հիմնականում կազմվում են երեք մասշտաբով՝ 1:300000,1:500000, 1:1000000:

Հատվածների, պետությունների, երկրամասերի, մարզերի շրջանների քարտեզներ:

մ 1:300000 ակնարկային տեղագրական քարտեզը ծառայում է ընդհանուր աշխարհագրական ուսումնասիրությունների համար, առանձնապես մեծ կիրառություն ունի բնակավայրերի տեղաբաշխմանը վերաբերվող հարցերը լուծելու, նոր ուղեգծեր անցկացնելու, շինարարական նոր կառույցներ նախագծելու համար:

մ 1:500000 ակնարկային տեղագրական քարտեզը առանձնապես մեծ կիրառություն ունի ավիացայի ասպարեզում, որի պատճառով նրա վրա շատ արտահայտիչ կերպով պատկերված են՝ գետերը, ճանապարհները, բնակավայրերը (եզրագծերով), անտառները, ռելիեֆի հիմնական ձևերը, այլ կերպ ասած բոլոր այն օբյեկտները, որոնք բնորոշ են օդից լավ տեսնելու և նրանց միջոցով կողմնորոշվելու համար: Ակնարկային տեղագրական քարտեղները առանձնահատուկ տեղ է գրավում մ 1:000000-ի քարտեզը: Այդ քարտեզը նշանակված է միաժամանակ իրար հետ օգտագործելու 4 կամ 9 թերթ միասին, ավելին լինելու դեպքում թերթերի միջև ստացվում են մեծ ճեղքվածքներ:

մ 1:1000000 մասշտաբի քարտեզը տալիս է մանրամասն պատկերումն, նրա վրա ցուցադրված են ռելիեֆը, ջրերը, անտառները, անապատներն ու տունդրաները, բնակավայրերն ու հաղորդակցության ճանապարհները և այլ վարչաքաղաքական ու ֆիզիկաաշխարհագրական օբյեկտները:

3. Ակնարկային քարտեզներն ունենում են 1:1000000-ից փոքր մասշտաբներ , տարբերում են՝ ակնարկային տեղեկատու և ստրատեգիական քարտեզներ ու բլանկովկաներ (ուրվագծային քարտեզ):

Տեղեկատու քարտեզները տալիս են առավելագույն տեղեկություններ բնակավայրերի, հաղորդակցության ճանապարհների, վարչաքաղաքական բաժանման և նրանց կենտրոնների բնական պայմանների և այլ տարրերի մասին: Տեղեկատու քարտեզները կազմվում են ավելի նուրբ ձևով և նրանցից կարելի է օգտվել միայն մոտ տարածությունից:

Ստրատեգիական քարտեզները ընդհանուր տեղեկություններ են տալիս ռազմական գործողությունների մասին, որի պատճառով նրանց վրա առանձնահատուկ տեղ է տրվում ստրատեգիական նշանակություն ունեցող օբյեկտների պատկերմանը: Քարտեզը ավելի հեշտ և ընթեռնելի դարձնելու նպատակով չեն պատկերում տակտիկական նշանակության օբյեկտները:

Բլանկովկաները կազմվում են առանց գունավորման. ծառայում են նրանց վրա տարբեր օբյեկտներ անմիջապես ձեռքով ավելացնելու, պարզ սխեմաներ կազմելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ն Զ Պ առարկան ընդգրկում է մի շարք ինքնուրույն, իրարից անկախ բաժիններ: Այդ բաժինների միասնական, համալիր ուսուցումը կարող է ապահովել ապագա զինվորի նախնական զինվորական պատրաստությունը: Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր բաժին ունի առարկայի դասավանդման իր առանձնահատկությունները, պարապմունքների բազմազանությունը՝ տեսական ու գործնական, անհատական ու խմբային, դասարանական ու դաշտային: Ռազմական տեղագրությունից տարրական գիտելիքների իմացությունը աշակերտներին հնարավորություն կտա օգտվել կողմնացույցից, քարտեզից, դրանց օգնությամբ կողմնորոշվել տեղանքում, տարբեր առաջադրանքներ կատարելու ժամանակ տեղագրական քարտեզները հմտորեն օգտագործելու, ինչպես նաև տեղանքում քարտեզով աշխատելու ձևերի և գծագրական փաստաթղթեր կազմելու մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Մ Հովհաննիսյան “Քարտեզագրություն”.
2. Ա. Վարդանյան “Տեղագրություն և լեռնային պատրաստության ձեռնարկ”.
3. Մոտոռհրաձգային գորքերի սերժանտի դասագիրք.
4. Ն ԶՊ ուսուցչի ձեռնարկ.
5. Համացանց